ՄԱԿՐՈՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԸՍՏ «ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ»

Ռ.Զ. Ջիջյան,
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սոցիոլոգիայի հիմնադիր Օգյուստ Կոնտն իր առաջ նպատակ էր դրել մշակել հասարակության գոյատևման ու զարգացման տեսությունը հետևելով բնագիտական տեսությունների կառուցման հարացույցին: Վերջինիս դասական օրինակ է տվել Իսաակ Նյուտոնը «Բնագիտության մաթեմատիկական սկզբունքները» (Philosophia Naturalis Principia Mathematica) հիմնային աշխատությունում: Գիտական տեսության կառուցման Նյուտոնյան հարացույցը կարելի է արտահայտել հետևյալ կերպ: Բացահայտել ուսումնասիրվող բնագավառի առավել ընդհանուր օրենքները (սկզբունքները) և դրանց միջոցով բացատրել այդ բնագավառի հայտնի երևույթները: Հաշվի առնելով 20-րդ դարի բազմաթիվ բնագիտական տեսությունների ձևավորման փորձը, տեսությունների կառուցման բնագիտական հարացույցը կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

Ա) բացահայտել ուսումնասիրվող ոլորտում կատարվող երևույթների օրինաչափությունները,

Բ) բացահայտել ուսումնասիրվող ոլորտի (համակարգի) հիմնային տարրերը և նրանց միջև հարաբերությունների (փոխազդեցությունների) բազիսային օրենքները,

Գ) բացատրել տվյալ ոլորտի երևույթներին վերաբերող հավաստի փաստական տվյալները, ելնելով բացահայտված բազիսային փոխազդեցությունների օրենքներից:

Միանգամայն հասկանալի է, որ եթե ցանկացած ոլորտի տեսություն կառուցվի ըստ վերը ներկայացված բնագիտական հարացույցի, ապա այդ տեսությունը, բացատրելով ուսումնասիրվող ոլորտի երույթները իր բազիսային սկզբունքների միջոցով, գիտական համայնքում կնվաճի հաստատված գիտական տեսության ստատուս: Ընդգծենք, որ հենց վերջին հանգամանքն է բնագիտական հարացույցի առավելությունը: Այդ եղանակով կառուցված գիտական տեսությունն անվերապահորեն ընդունվում է որպես հավաստի

գիտական գիտելիք, քանի որ կարողանում է բացատրել այդ ոլորտի փաստական ու հավաստի գիտելիքները:

Մակրոսոցիոլոգիան բնագիտական հարացույցով կառուցելու փորձը, որ մենք ձեռնարկում ենք այս աշխատությունում, հնարավորություն կտա պարզել, թե որքանով է հնարավոր ու արդարացված մակրոսոցիոլոգիական տեսության կառուցման այդպիսի միտումը:

1. Սոցիումի կայուն գոյատևման գործոնները:

Մակրոսոցիոլոգիայի տեսակետից, ամենակարևոր հարցն այն է, թե որո՞նք են սոցիումի ներքին կայունությանը սպառնող գործոնները և ի՞նչ եղանակով է հնարավոր ապահովել հասարակության կայուն գոյատևումն ու կենսագործունեությունը: Այդ հիմնահարցի քննարկման համար որպես ելակետային դրույթներ ընդունենք հետևյալ սկզբունքները.

Սկզբունք 1. Մարդ անհատը ծնվում է հասարակությունում գոյատևելու և աշխատելու սոցիալական հակումներով, որոնք կարող են զարգանալ ու ձևավորվել որպես հասարակական նորմալ կյանք վարելու կարողություններ միայն սոցիալականացման համար բարենպաստ հոգևոր ու նյութական պայմաններում:

Սկզբունք 2. Հասարակությունը, նրա կառավարման օրգանները՝ պետությունը և կառավարությունը, պետք է մշտական աշխատանք տանեն, որպեսզի օպտիմալ պայմաններ ստեղծեն սոցիումի կայուն գոյատևման և, հատկապես, անհատների արդյունավետ սոցիալականացման համար:

Սկզբունք 3. Անհատի սոցիալականացումը իրականացնելու համար հասարակությունը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի, որպեսզի անհատը կարողանա վաղ հասակից զարգացնի սոցիալական կյանք վարելու իր բնական հակումները, զարգացնի իր բանականությունը (մտավոր կարողությունները) և յուրացնի հասարակական կյանքի նորմերը և արժեքները:

Սկզբունք 4. Հասարակությունը պետք է մշակի իր կյանքի ու գործունեության այնպիսի օրենքներ, որ հասարակության գործառույթն իրականանա ինքնակառավարման սկզբունքով՝ լավ մեխանիզմի աշխատանքի նմանությամբ:

Հետևանք 1. Հասարակության սոցիալական պահանջմունքները բավարարելու համար պետությունը պետք է ֆինանսական միջոցներ կուտակի՝ պրոգրեսիվ հարկ հավաքելով հիմնականում ունևորներից և հաջողակ գործարար մարդկանցից.

- հարկ մեծ ունեցվածքից,
- լրացուցիչ հարկ շքեղ («աչք ծակող») ունեցվածքից,
- հարկ մեծ եկամուտից,

- լրացուցիչ հարկ տարվա ընթացքում մեծ տոկոսով աճող եկամուտներից:

Հետևանք 2. Հասարակության նորմալ գոյատևման համար, պետությունը պետք է կազմակերպի հասարակական արտադրության պլանավորումը:

Հետևանք 3. Առանց նպատակասլաց օրինաստեղծ աշխատանքի, հասարակությունում չի կարող ձևավորվել օրենքների այն համակարգը, որը կարող է ապահովել հասարակության ինքնակառավարող և օպտիմալ գործառույթը:

Հետևանք 4. Շուկայական հարաբերությունները և ազատ մրցակցությունը ավելի բացահայտ քաոսային իրավիճակ ստեղծելու միտում ունեն, քան թե ինքնակառավարող հասարակական մեխանիզմ ստեղծելու ուղղվածություն:

Հետևանք 5. Կապիտալիստական հասարակարգը կարող է դառնալ օպտիմալ սոցիալ-տնտեսական համակարգ միայն պետական կառավարման շնորհիվ՝ այն իրականացնելով Ջ.Մ. Քեյնսի և նեո-քեյնսականության ոգով (Скидельски 2011):

2. Անհատ և հասարակություն:

Սկզբունք 5. Մարդու հոգևոր պահանջմունքների հիմքում, մի կողմից, նրա բանականությունն է, իսկ մյուս կողմից, նրա սոցիալական կապերն ու հարաբերությունները:

Սկզբունք 6. Սոցիալական կյանքի ու հարաբերությունների հազարամյակների պատմությունը անհատների մոտ ձևավորել է մարդկային շփումների բնածին հակում և այն բավարարելու պահանջ:

Սկզբունք 7. Սեփական շահերի, այսինքն՝ սեփական պահանջմունքների գիտակցումը դառնում է անհատների սոցիալական ակտիվության հիմքը:

Սկզբունք 8. Մարդ անհատը գործում է ըստ այն նպատակի, թե ինչ է նա գիտակցում որպես իր անձնական շահ տվյալ պահին:

Սկզբունք 9. Մարդ անհատը այնքանով է պատրաստ գործնական քայլերի դիմել հանուն իր նպատակների իրագործման, որքանով նա ռեալ է համարում այդ քայլերի իրականացման հեռանկարը: /Մասնավորապես, որքանով է այդ քայլն անվտանգ, մի կողմից, և քաջալերելի, ըստ նրա անմիջական շրջապատի կարծիքի, մյուս կողմից/:

Սկզբունք 10. Իշխանության ձևը առաջանում և հաստատվում է ըստ պատմականորեն ձևավորված ավանդույթների և տվյալ սոցիումի միջին անհատի իշխանության ենթարկվելու (կամ հակադրվելու) բնածին սոցիալական հակումների:

Անդրադառնանք այն հետևանքներին, որոնք բխում են այս սկզբունքներից:

Հետևանք 6. Սեփական շահի գիտակցումը և այն բավարարելու ձգտումն են հանդիսանում անհատի հասարակական արարքների անմիջական պատճառը և մղիչ ուժը:

Հետևանք 7. Անհատի սոցիալ-քաղաքական ակտիվության վրա կարելի է էականորեն ազդել համապատասխան քարոզչության (պրոպագանդայի) միջոցով՝ անհատին համոզելով, որ տվյալ նպատակը համապատասխանում է իր շահերին և որ այդ նպատակը, իրոք, իրագործելի է:

Հետևանք 8. Անհատի սոցիալ-քաղաքական ակտիվությունը կարող է նկատելիորեն աճել, եթե նա զգա, որ իր շահերի ու նպատակների առումով նա մի հոծ ու հզոր բազմության (սոցիալական խավի, դասակարգի, կուսակցության և այլն) մասն է:

Հետևանք 9. Այստեղից է բխում քաղաքական կուսակցությունների և տարբեր հասարակական խմբավորումների ձգող ուժը և ազդեցությունը. կոլեկտիվ ուժի զգացմունքն է նպաստում անհատների մասնակցությանը դասակարգային պայքարում, ապստամբություններում, ցույցերում, և նույնիսկ ահաբեկիչների կազմակերպություններում:

3. Սոցիումի զարգացում:

Սահմանում 1. Առաջադիմությունը /զարգացումը, պրոգրեսը/ այն էվոլյուցիան է, որն ունի դրական ուղղվածություն՝ ինչ-որ կոնկրետ չափանիշով:

Ընդունված սահմանումների համաձայն, զարգացումը կարելի է սահմանել որպես բնության (և հասարակության) այնպիսի մի նոր կողմի, երևույթի (կամ համակարգի) առաջացում, որն իր որոշ էական հատկությունով գերազանցում է իր նախորդներին:

Համապատասխանաբար, սոցիումի զարգացումը մենք արձանագրում ենք այն դեպքում, երբ նկատում ենք նրա ամբողջական բնութագրերի կամ առանձին կողմերի ու կառուցվածքների մեջ էական բարեփոխումներ:

Սկզբունք 11. Բնությունում (և հասարակությունում) ամեն մի փոփոխություն առաջանում է որևէ փոխազդեցության (գործունեության) արդյունքով:

Սկզբունք 12. Ցանկացած փոխազդեցություն (գործունեություն) տեղի է ունենում տվյալ ոլորտի որոշակի պայմաններում:

Սկզբունք 13. Հասարակությունում տվյալ ոլորտի նոր գործոնները կարող են առաջանալ հասարակության անդամների գաղափարների ու պրակտիկ գործունեության շնորհիվ:

Սկզբունք 14. Արմատական սոցիալական բարեփոխության անմիջական պատճառը հասարակական նշանակալից խմբերի համոզ-

վածությունն է, որ այդ բարեփոխման նպատակը հույժ կարևոր է և սոցիալական բարձրագույն արժեք է:

Սկզբունք 15. Սոցիալական բարեկարգման հասարակական շարժումը հասնում է իր նպատակին, երբ նշանակալից խմբերի առաջնորդները պատրաստ են գնալ մեծագույն զոհաբերությունների հանուն իրենց նպատակի:

Սկզբունք 16. Հավասարության, ազատության և հեղափոխական այլ գաղափարները ծնվում են անհատների սոցիալ-փիլիսոփայական մտորումներում, բայց վարակելով հասարակական զանգվածներին՝ դառնում են անդիմադրելի սոցիալ-քաղաքական ուժ:

Սկզբունք 17. Երբ մասնավոր սեփականության բնազդը /ինչպես ամեն մի չար բնազդ ընդհանրապես/ հակադիր ուժի դիմադրություն չի հանդիպում, այն կարող է հասնել ամենաայլանդակ ծայրահեղ դրսևորման:

Հետևանք 10. Յուրաքանչյուր ոլորտում զարգացման շարժիչ ուժը համապատասխան փոխազդեցությունն է (փոխհարաբերությունը) և նրա բարենպաստ պայմանը:

Հետևանք 11. Հասարակական կյանքի պահանջմունքների կամ անհատների նոր գաղափարների ազդեցությամբ հասարակության տվյալ ոլորտում գործող հիմնային հարաբերությունները կարող են փոխարինվել նոր հիմնային հարաբերություններով:

Հետևանք 12. Հասարակությունում առաջացող հեղափոխական (թռիչքաձև) զարգացումը տեղի է ունենում, երբ կատարվում է համապատասխան ոլորտի հիմնային հարաբերության արմատական փոփոխություն:

Հետևանք 13. Հեղափոխական զարգացումը կարող է տեղի ունենալ նաև այն դեպքում, երբ տվյալ ոլորտում առաջանում են արտակարգ բարենպաստ պայմաններ կամ որակապես նոր ակտիվ գործոններ:

Հետևանք 14. Նշանակալից հասարակական խմբերն անցնում են ակտիվ գործողությունների, երբ համապատասխան պրոպագանդայի ծավալման արդյունքով նրանց մոտ ձևավորվում է այն համոզմունքը, որ բարեփոխումների իրենց նպատակը իրական է, ունի իրագործման ռեալ հնարավորություն:

Հետևանք 15. Արմատական սոցիալական բարեփոխման գաղափարը համակում է հասարակական նշանակալից խմբերը, երբ նրանք գտնվում են շատ թե քիչ սոցիալական բարվոք վիճակում:

Հետևանք 16. Պետք է ոչ թե կառուցել և հետազոտել զարգացման վերացական մոդելներ, այլ պետք է բացահայտել նշանակալից երևույթների սոցիալական պայմանները և պատճառները և մշակել սոցիումի բարեկարգման կոնկրետ ուղիները:

Հետևանք 17. Ի հակադրություն մարքսիստական տեսակետի, մեր դարաշրջանի «գունավոր հեղափոխությունները» բացահայտորեն ցուցադրում են, որ նրանք բռնկվել են ոչ թե ծայրաստիճան ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, երբ անհատը հնարավորություն չունի մտորելու կամ ներգրավվելու որևէ հասարակական շարժման մեջ, այլ այն վիճակում, երբ ժողովրդական զանգվածները զգում են իշխանությունների ճնշման ուժի թուլացում:

Մակրոսոցիոլոգիայի «բնագիտական հարացույցի» հնարավորությունների հետազոտության նպատակով կարևոր է քննարկել հետևյալ խնդիրների լուծման ուղիները:

Խնդիր 1. Ինչպես բացատրել, որ աշխարհի ամենամեծ ու ամենահին երկրների պատմությունը լիովին հակասում է սոցիալ-տնտեսական ֆորմացիաների մասին տարածված պատկերացումներին: /Այսպես, Հնդկաստանը մինչ վերջերս խստորեն բաժանված է եղել կաստաների, իսկ Չինաստանը փաստորեն ապրել է առանց կաստաների և նույնիսկ առանց եկեղեցու և քրմերի/:

Այս հարցին պատասխանելու համար բավարար է ընդունել հետևյալ հավանական դրույթը.

Հիպոթեզ 1. Հնդկաստանի կաստային հասարակարգը հենվում է անհատների մոտ կաստաների սոցիալական ստատուսի պահպանման սոցիալական հակվածության վրա, որը հասարակության կաստային շրջապատում և սոցիալական ավանդույթների շնորհիվ ձևավորվում և հասունանում է որպես կաստային ստատուսի անհրաժեշտության խորը համոզմունք:

Խնդիր 2. Ինչպես բացատրել, որ Հին Հունաստանի քաղաք-պետություններում՝ միևնույն տնտեսական բազիսի պայմաններում սոցիալ-քաղաքական վերնաշենքն անդադար փոփոխվում էր՝ անցնելով սոցիալ-քաղաքական կառուցվածքի բոլոր հնարավոր տիպերը:

Խնդիր 3. Ինչպես բացատրել, որ հույները՝ ի տարբերություն հին աշխարհի այլ ազգերի, տարածվեցին իրենց երկրից դուրս քաղաք-պետությունների ձևով ողջ Միջերկրականի ու Պոնտոսի ափերով:

Հույն հանճարեղ ազգի սոցիալ-քաղաքական պատմությանը վերաբերող նշված հարցադրումներին պատասխանելու համար անհրաժեշտ է թվում ընդունել հետևյալ հավանական դրույթները.

Հիպոթեզ 2. Հին Հունաստանի սոցիալ-քաղաքական կենսակերպի հիմքում դրված է հույն անհատի՝ անկախ ցեղական համայնքում ինքնուրույն ապրելու սոցիալական հակումը:

Հիպոթեզ 3. Հույն անհատին բնորոշ էր հետաքրքրասեր և նախաձեռնող լինելու բնածին սոցիալական հակվածությունը:

Խնդիր 5. Ինչպես բացատրել, որ գեղեցիկ ու կարգավորված ֆեոդալական կյանքով ապրող եվրոպական ժողովուրդները դարձան քաղաքական հավասարության և քաղաքացիական իրավունքների մոլեռանդ ջատագովներ ու անհաշտ մարտիկներ:

Խնդիր 6. Ինչպես բացատրել, որ հանդարտ գյուղատնտեսական կյանք ապրող եվրոպական ժողովուրդները մեկ էլ վարակվեցին շահութաբեր արտադրության մոլուցքով:

Խնդիր 7. Ինչպես բացատրել, որ հավասարության ու ազատության համար թագավորական իշխանության դեմ պայքարող բուրժուաները ֆեոդալիզմը տապալելուց հետո կառուցեցին ամենադաժան ու անմարդկային շահագործության սոցիալ-տնտեսական համակարգը՝ «վայրի կապիտալիզմը»:

Խնդիր 8. Ինչպես բացատրել, որ մեծահարուստ նոր բուրժուաները, ի հակադրություն ֆեոդալական արիստոկրատիայի, իրենց շահույթները չծախսեցին շռայլ կենցաղի հրապույրների վրա, այլ շարունակեցին վարել համեստ կենսակերպ՝ շահագործելով և կեղեքելով նոր ձևավորվող բանվոր դասակարգը:

Վերջին հարցադրումը հուշում է, որ Մաքս Վեբերի համոզմունքը, որ կապիտալիզմի ձևավորմանը նպաստել է բուրժուաների բողոքական հավատը, հնարավոր է ընդունել միայն երկու պայմանով: Առաջին՝ եթե կարողանանք մոռանալ «վայրի կապիտալիզմին» բնորոշ անմարդկային շահագործման եղելությունը, և երկրորդ՝ եթե կարողանանք մոռանալ, որ բողոքականությունը քրիստոնեական հավատի ճյուղավորում էր, իսկ քրիստոնեական բարոյականությունը անհամատեղելի էր վայրի կապիտալիզմի բուրժուազիային բնորոշ մարդատյաց կեղեքողական հոգեբանությանը: Սակայն, քանի որ այս երկու հանգամանքներից ոչ մեկը թույլատրելի չէ մոռանալ, ապա ավելի իավանական է թվում բուրժուաների «պուրիտանական» ապրելակերպի հետևյալ բացատրությունը:

Հետևանք 18. Եթե կապիտալիզմի ձևավորման վաղ շրջանում բուրժուան իր շահույթի զգալի մասը շռայլորեն ծախսեր, ապա նրա բիզնեսը շատ արագ կտապալվեր ազատ մրցակցության պայմաններում:

Խնդիր 9. Ինչպես բացատրել, որ սեփական ժողովուրդին մարդու իրավունքներից զրկած Չինաստանի կոմունիստական իշխանությունը կարողացավ իր երկրի տնտեսական հզորությունը հավասարեցնել կապիտալիստական աշխարհի մշտական առաջատարի հզորությանը, և այդ կոմունիստական իշխանությունը նույնիսկ փըրկեց ազատ աշխարհի ու «համաշխարհային իմպերիալիզմի» առաջատար Ամերիկայի Միացյալ Նահանգներն 2007 թ. ճգնաժամի պայ-

մաններում հավանական փլուզումից՝ այն էլ ֆինանսական հսկայական օգնության շնորհիվ:

Խնդիր 10. Ինչպես բացատրել, որ ԱՄՆ ֆինանսական համակարգը, որն անմիջականորեն արձագանքում և միջոցներ էր ձեռնարկում երկրի տնտեսական համակարգի ցուցանիշների ամեն մի 0,1 տոկոսի չափի փոփոխության դեպքում, հանկարծակի հայտնվեց 2007 թ. ահավոր ֆինանսական ու տնտեսական ճգնաժամի անդունդի եզրին:

Չինական ֆենոմենը, իր պատմական աննախադեպ կարևորությամբ, պահանջում է առանձին հանգամանալից հետազոտություն: Որպես առաջին քայլ այդ ուղղությամբ, թվում է՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հավանական կանխադրույթները:

Հիպոթեզ 4. Սոցիալական շարժման հաջողությունը՝ այդ թվում նաև «չինական հրաշքի» կապակցությամբ, կախված է հետևյալ չորս հիմնային գործոններից.

- սոցիալական կարևոր վերափոխման գաղափար,
- սոցիալական շարժման առաջնորդների նվիրվածությունն իրենց նպատակին,
- շարժման մասնակիցների զանգվածի կարողությունը իրականացնել առաջնորդների կողմից նախատեսված քայլերը,
- շարժման մասնակիցների զանգվածի հոգևոր միասնությունը:

4. Ժամանակակից կապիտալիստական հասարակությունը:

Սկզբունք 18. Ոչ մի հասարակարգ, այդ թվում նաև շուկայական ազատ մրցակցության վրա հենված հասարակարգ, չի կարող ինքնաբերաբար՝ առանց մասնագետների գաղափարների և կառավարության աջակցության, կազմավորվել որպես օպտիմալ և ինքնակարգավորվող սոցիալ-տնտեսական կառույց:

Հետևանք 19. Սպեկուլյատիվ ֆինանսական կապիտալի հանդեպ լիովին բաց թողության վիճակը հանգեցրեց 2007թ. համաշխարհային ֆինանսական աղետալի ճգնաժամին, որը մինչև օրս էլ չի հաջողվում վերջնականորեն հաղթահարել:

Հետևանք 20. Աշխարհի զարգացած երկրների ղեկավարների գագաթնաժողովների քննարկումները համոզում են, որ նրանք արդեն գիտակցում են համաշխարհային ֆինանսական սպեկուլյատիվ կապիտալի կողմից ձեռք բերված ահռելի միջոցների ուժն և վտանգը: Միանգամայն պարզ է դարձել, որ համաշխարհային ֆինանսական սպեկուլյատիվ կապիտալի դեմ անհրաժեշտ է պայքարել՝ միայն միավորելով աշխարհիս բոլոր երկրների ուժերը: Համաշխարհային ֆինանսական սպեկուլյատիվ կապիտալի դեմ հնարավոր է և անհրաժեշտ է պայքարել՝ միայն ընդունելով ֆինանսական

կապիտալի կարգավորման օրենքներ՝ պարտադիր բոլոր պետություններին և բոլոր կազմակերպություններին համար:

Հետևանք 21. Վերջին շրջանի իրադարձությունների ընթացքը հուշում է, որ ոչ միայն պետական գործիչները, այլ նաև աշխատավոր զանգվածները գիտակցում են, որ ողջ աշխարհին սպառնող ամենամեծ վտանգը ոչ միայն օրենքներից վեր գտնվող ֆինանսական սպեկուլյատիվ կապիտալն է, այլ նաև նրա հիմքը կազմող անկառավարելի կապիտալիզմը, առաջին հերթին՝ անկառավարելի շուկայական ազատ մրցակցությունը:

Հետևանք 22. Կարելի է կանխագուշակել, որ հաջորդ համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո աշխարհիս պետական ղեկավարները կգիտակցեն, որ մեր օրերում աշխարհին սպառնող ամենամեծ վտանգը անկառավարելի կապիտալիզմն է:

Հետևանք 23. Կարելի է կանխագուշակել նաև, որ մոտ ապագայում Չինաստանը կդառնա տնտեսապես աշխարհիս ամենահզոր երկիրը, որից հետո աշխարհիս պետական ղեկավարները կգիտակցեն պետական ղեկավարության սկզբունքային առավելությունը և համապատասխան միջազգային օրենսդրության ընդունման անհրաժեշտությունը:

Հետևանք 24. Նկարագրված իրավիճակում սոցիալապես բոլոր առաջադիմական ուժերը պետք է միանան աշխարհով մեկ, որպեսզի արագացնեն ժամանակակից կապիտալիստական հասարակարգի պետական կառավարման աստիճանի մեծացման գործընթացը:

Հետևանք 25. Ժամանակակից կապիտալիզմի պետական կառավարումը իրականացնելու համար հատուկ մոդելներ հորինելու անհրաժեշտություն չկա: Պետք է պարզապես աստիճանաբար մեծացնել պետական կառավարման աստիճանը և հետևել նորամուծության արդյունքներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Скидельски, Р. Кейнс: Возвращение мастера. М.: «Юнайтед Пресс», 2011.